



ք. Գավառ, Գր. Լուսավորչի 36
հեռ. (0264) 6-15-11

Էլ. հասցե: info_gavar@aarhus.am

N AA - 002

« 09 » Փետրվարի 2016թ

«Սևանի իշխանի պաշարների վերականգնման
և ձկնաբուծության զարգացման» հիմնադրամի
տնօրեն պարոն Ա. Աղաջանյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Աղաջանյան

Մասնակցելով Գեղարքունիքի մարզի Սևանա լճի Կարճաղբյուր համայնքին հարող հատվածում «Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման» հիմնադրամի կողմից նախատեսվող մոդելային ցանցավանդակային տնտեսության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի հանրային լսումներին և տեղեկացնելով հանրությանը նախագծի մասին /այսուհետ նախագիծ/, մենք հավաքագրել էինք քաղաքացիների, քաղաքացիական ակտիվ խմբերի և փորձագետների առաջարկները և կարծիքները /կից համապատասխան գրությունը/, որը ուղարկվել էր ՀՀ բնապահպանության նախարարին: Հաջորդ հանրային քննարկման ժամանակ դուք մեզ հավաստիացրեցիք, որ առաջարկներն ամբողջությամբ ընդունվել են և կներառվեն նախագծում, նաև ներկայացրեցիք, որ պլանավորված է բնապահպանական մոնիթորինգն իրականացնելու նպատակով ստեղծել տեղական մասնագիտացված կազմակերպություններից և փորձագետներից բաղկացած անկախ, գիտական մոնիթորինգի խորհուրդ (այսուհետ՝ Մոնիթորինգի խորհուրդ), որը ուղեկից կլինի Համալիր ծրագրի ողջ գործունեության ընթացքում:

Վերոնշյալ խորհրդի հոգաբարձուների խորհրդի 15.06.2015թ. թիվ 03/15 որոշմամբ հաստատված ժամանակացույցով հստակ երևում է, որ 2015թ.-ին պլանավորված մի շարք միջոցառումներ են եղել:


Հիմք ընդունելով ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրիը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը, որպես պատասխանատու մարմին՝ խնդրում եմ Գավառի Օրհուս կենտրոնին տրամադրել պաշտոնական տեղեկատվություն ծրագրի իրականացման ընթացքի և 2015թ.-ի կատարված գործողությունների մասին /նշելով կատարողների, ֆինանսական աղբյուրների և արդեն առկա արդյունքների մասին/:

Եթե կան այնպիսի միջոցառումներ, որոնք նշված չեն, բայց իրականացվել են, խնդրում եմ տրամադրեք նաև դրանց վերաբերյալ տեղեկատվություն:

N	Մոնիթորինգային ծրագիր	Հաճախականությունը	Ծանոթություն
1.	Լճի ամբողջ ծավալի և հատակի համալիր մոնիթորինգ	2015թ. 3	Մայիս, օգոստոս, հոկտեմբեր
2.	Լճի ամբողջ ծավալի էկոլոգիական որակի ինդիկատորային ցուցանիշների մոնիթորինգ	2015թ. 3	Հուլիս, սեպտեմբեր, նոյեմբեր
3.	Լճի ամբողջ մակերևութային շերտի արբանյակային մոնիթորինգ	2015թ. 8	2015թ. - ամիսը 2 անգամ, (հուլիս-նոյեմբեր)
4.	Սևանի ավազանի գետերի, ներառյալ Հրազդան գետի էլքի գոտին, համալիր մոնիթորինգ.	2015թ. 8	«Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման» հիմնադրամ 59 դիտակետ,
5.	Չյան ծածկույթի բաղադրության մոնիթորինգ	2015թ. 1	դեկտեմբեր,
6.	Ցանցավանդակային տնտեսությունների գոտում էկոլոգիական որակի մոնիթորինգ Ս. ինդիկատորային ցուցանիշների մոնիթորինգ Բ. Ջրի և հատակային նստվածքների համալիր մոնիթորինգ	2015թ. 2015թ. 6	6 դիտակետում Հուլիս-սեպտեմբեր-շաբաթական սեպտեմբեր-նոյեմբեր-օրեկան 48 դիտակետում Մարտ-դեկտեմբեր-ամսեկան 1 դիտակետում –անընդհատ 6 դիտակետում, ամսեկան
7.	Եղանակային պայմանների և մթնոլորտային տեղումների մոնիթորինգ.	2015թ. հուլիս-օգոստոսից	Կարճադրյուր, ցանցավանդակների գոտի, Նորադուզ կամ Արտանիշ, Ծովագյուղ կամ թերակղզի
8.	Լճում սեղիմենտացիայի արագության որոշում.	2015թ. 6	հուլիս-օգոստոսից
9.	Լճի ջրում լուծված և հատակային նստվածքներից արտազատվող գազերի մոնիթորինգ	2015թ. 2	հուլիս-օգոստոս և սեպտեմբեր - հոկտեմբեր

Կանխավ շնորհակալություն:

Քավառի Օրիուս կենտրոնի համակարգող



Լ. Ասոյան